Աշակերտներուն առողջական վիճակը. — 1906-10 տարիներու մէջ աշակերտները սովորաբար թիթե ու վաղանցիկ հիւանդութիւններ ունեցաւ: Թէեւ գտնուեցան ժանտասենդէ բունուող 1-2 աշակերտներ, սակայն ի գործ դրուած բժշկական հրահանգներու և յարատե հոգածութեան չնորհիւ, ապաքինեցան բոլորովին:

Աշակերտներուն առողջութեան և մարմնական զարգացման մեծապէս նպաստած էն Կարնոյ ընտիր օղն ու ջուրը, պարբերաբար արուած մարմնամարզի դասերը, շրջապայտթիւնները, չմշկութիւնը, լողալը և ամսանային վրանական կեանքը: Ամէն տարի Սեպտ. 1 Յունիս 30 աշակերտները 4-5 անգամ բաղնիք կ'երթան:

1910 Մայիսին Հարթակապետ Ճազիմ Պէյ վիճուրական մարզանքի դասեր տուաւ:

1906-10ին վարժարանին բժիշկն էր հաստատութեան լնթացաւարաներէն Տօքթ. Սուրէն էֆ. Ռուզունան, վկացեալ Պէյրութի Ֆրանսական բժշկական վարժարանին չնորհակալութեան եւս:

Վերջին տարին, ի բայցակայտթեան Տօքթ. Ռուզունեանի, փոխանորդաբար կ'այցելէր Տօքթ. Յ. Տէր Դաւիթեան: Բժշկապետ Յ. Զավրիկէվ ձրիաբար կը դարմանէր վարժարանիս աշակերտները՝ գովելի պատրաստակամութեամբ մը՝ ինչ որ արժանի է հրապարակային չնորհակալութեան եւս:

Ամուղջ 29 տարուան երկարատե շրջանի մէջ վարժարանն ընդունուած 771 աշակերտներէն մայն 11 աշակերտներ մնուած են, որոնցմէ 7ը իրենց հայրենական տան մէջ հիւանդացած ու մնուած, 1ը հայրենիք վերաբարձած ատեն կառքի արկածի մը զոհ զայցած, իսկ 3ը վարժարանին մէջ հիւանդացած ու մնուած:

Աշակերտներու Վարէ. — Մինչև 1905-6 տարին վարժարանին ներքին հսկողութիւնն յանձնուած էր Հերթապահ-Կառավարիչներու: 1906-7ին այդ հսկողութիւնն յանձնուեցաւ Բնդէն. Կառավարչի մը և Հերթապահ-Կառավարիչներուն: 1907-8ին Ներքին-Տնօրիչութեան պաշտօն մ'ալ հաստատուեցաւ, մ'լ աւելի հոգ տանելու համար վարժարանին ներքին կարգապահութեան: 1908-9ին ջնջուեցաւ այդ պաշտօնը, ինչպէս նաև Հերթապահ Կառավարչական դրութիւնը, և վարժարանին ներքին հսկողութիւնն յանձնուեցաւ Բնդէն. Կառավարչի մը.

Դրութիւն՝ որ չարունակուեցաւ 1909-10ին ևս՝ միշտ Վերատեսչին կամ Փոխ-Վերատեսչին վերին հսկողութեան ներքեւ:

1906 Մերգ. 1-1910 Օգոստ. 31 վարժարանէն արձակուեցաւ 43 հոգի, որոնցմէ 9ը միայն ծուլութեան և յուի վարքի պատճառաւ, իսկ մնացիս ներուն ամենամնած մարդ հեռացուցուեցաւ իրեւ անհանդարտ տարր, հետեւանդք սխալ ըմբռնուած պատթեան, և կամ իրեւ անգամէ աւելի դասարան կրինող:

Նուազախումբը (Fanfare), որ կազմակերպուած էր 1903ին, կ'աւելցնէր վարժարանին չուքն ու վայլը՝ վարժարանի տօնական օրերուն, շրջադայութիւններու և ամարնային օդափոխութեան միջոցին և մանաւանդ ազգային հսկողէներու կատարուած ատեն:

Երջագայութիւններ եւ Արձակուրդ. — Աշակերտները 1906-1910 առաջնորդութեամբ ուսուցիչներու, զեղեցիկ եղանակին շրջադայութիւններ կատարեցին: Կարնոյ մօտակայ նոյն այն վայրերը, որոնք մի առ մի յիշասակուած են Հեղամեայ Տեղեկապրին մէջ (Տես էջ 48):

Աշակերտները 1906-7ին այցելեցին նաև Կարմիր Վանք:

1907-8ին բարձրագոյն դասարաններու աշակերտները, առաջնորդութեամբ Պ. Ա. Խաչարեանի, կատարեցին հայրենական պտոյտ մը՝ գէպ ի թորթում: Թէեւ ծրագրուած էր մինչեւ թորթումի լիճը երթալ, սակայն Պ. Խաչարեանի տկարութեան պատճառաւ, հարկադրուեցան չորրորդ օրը վերադառնալ Մրտածոր:

Կարնեցի աշակերտներուն համար նորութիւններ էին պտուղներով բեռնաւորեալ ծառերը, վիթխարի Ծնկուղենիները, Զինուորի անսամբլ, Թորթումի բերդին աւերակուեցին եւս:

Նոյն տարին Ե. և Զ. դասարաններու աշակերտները, առաջնորդութեամբ Նշան էֆ. Գալֆահնի, այցելեցին իլինէի տիպար ապարակը, ուր բացատրութիւններ սասացան տելւոյն գիւղատնական և երկրագործական գործիքներու գործածութեան մասին:

1906-7, 1907-8 և 1909-10 վարժարանական տարիներու ամարնային արձակութիւններու, միջոցին, վարժարանին աշակերտները օդափոխութեան գացին Մրտածոր, ուր գրաններու ներքեւ անցուցին Յուլիս և Օգոստոս ամիսները: 1909ի ամրան աշակերտները զրկուեցան իրենց հայրենիքները:

Մրտածորի այնքան հաճելի և Սամասարեանցիներու համար մանաւանդ սիրելի կիսն քը ամիսով կերպով նկարագրուած ըլլալով Հնդկապրին մէջ (Տես էջ 48), աւելորդ կը համարու կրինել անգամ մ'ալ:

Այցելութիւններ. — 1906-1910 տարիներու մէջ իրենց այցելութիւններով վարժարանը պատճառած են Տարօնոյ Առաջնորդ Տ. Ներսէս Ս. Եպս. Խարամանեան, Կարնոյ Առաջնորդ Տ. Սմբատ Ս. Վարդապետ Սատէթեան (այժմ Եպիսկոպոս) Կարնոյ նախորդ կուսակալ Թահիք Փաշա և արդի կուսակալ Ճելալ Պէտ. զինուորական հրամանատարները, Կարնոյ Օսմաննեան երեսփոխան՝ Տօքթօր Գարեգին էֆ. Փաստրմանեան (վարժարանին ընթացաւարտներէն) և Վարդգէս էֆ. Սէրէնկիւլեան, «Միութեան և Յառաջդիմութեան» Քննիք Եածի Պէտ. իր ընկերները, Կարնոյ Ընդհանուր

Դատախազ Գէորգ էֆ . Մեծասուրեան , Կառավարական այլ պաշտօնեաներ , Հիւպատուաներ , Եւայն և յն և այն , որոնք քաղաքին կամ Արտաձորի մէջ հիւրասիրուած են ըստ արժանույն :

Տօներ եւ Հանդեսներ . — Բառ սովորութեան 1906-1910 տարիներու մէջ և սկատարուեցան դպրոցական պարզ հանդէսներ՝ Կաղանդի , Ծննդեան , Բարեկենդանի և Զատկի առիթներով (Այս մասին ամփոփ նկարագրութիւն ան Հնդամեայ Տեղեկագիր Ամսասարեան Վարժարանի էջ 51-52) :

Ներկայացումներ , Երեկոյբներ , Ցերեկոյբներ . — 1906-1907ին Թատերական Ներկայացում չարուեցաւ :

1907 Մայիս 19ին , բարերարին մահուան տարելիցի առթիւ , առաջին անդամն ըլլալով գրական համախմբում մը տեղի ունեցաւ՝ նախաձեռնութեամբ Փոխ-Վերատեսուչ Գ . Արուեստ էֆէնտի : Նոյնը կրկնուեցաւ 1908ի և 1910ի Մայիս 19ին :

1906-1910 տարիներու մէջ տեղի ունեցած հանդէսներուն , ներկայացումներուն , խրախճանքներուն և ցոյցերուն մէջ ամենէն կարեւորներն են իրաւամբ Օսմ . Սահմանադրութեան հոչակումն յետոյ կազմակերպուածները :

Անմուանալի է մանաւանդ այն սրտայոյ տեսարանը որ պարզուեցաւ , երբ Գ . Արուեստ էֆէնտի 1908 Յուլիս 1st քաղաքէն Մրտաձոր երթալով՝ աշակերտներուն աւեստեցած ազատութեամբ : Նախ վարամուս ու թերածաւատ ակնարկներ նշմարուեցան , կարծես կտակ կը նկատուէր հաւորդուած լուրը , առաջին անմիջապէս յետոյ համոզում գոյանալով լսուեցաւ պոսթկումը այն խեղդուած ձայնին , որ մասնաւորապէս վերջին քառորդ դարու ընթացքին մէջ սեղմուած էր տառապող Հայոց կուրծքին մէջ :

Կեցցէներու և երգերու դղրդիւնը օդը կը թնդացնէր : Յաջորդ Կիրակէ օր , հանդիսաւոր թափորալ Սահմանարեանի աշակերտներն և տառացիչները գացցն Մրտաձորի մօտակայ Խոչկավանքը , ուր Հոգեհանգստեան պաշտօն կատարել տուին ի յիշատակ սոյն բոլոր անձանց , որոնք գոյնեցին իրենց թանկագին կեանքը՝ Ազատութեան վեհ գաղափարին տարածմանը համար :

Վանքին գաւթին մէջ Հոգեհանգստիս կատարուելէ յետոյ , թափորը յառաջաւցաւ գէպի ի գիւղին մղկիթը , ուր աղօթք մ՞արտասաննեց իմամբ :

Նաւասարդ . — Առանձին շուքով կատարուեցաւ Հոյ Հեթանոսական և առափտական կեանքն յիշեցնող նուիրական տօնը՝ առաջին Ամանորը սիրելի ու հմայիչ է մանաւանդ Սահմանադրութեանը :

Նոյն օրը , վրանի տակ , պարզ բնմի մը վրայ , վորքիկ Սահմանադրութեանը ներկայացուցին «Գաղթականներ» թատերախաղը . ի ներկայութեան Խաչկալանքի ուխտաւորներուն և մերձակայ գիւղերու բնակիչներուն , որոնցմէ շատերն առաջին անգամն էր որ թատրոն կը տեսնէին :

Ներկայացումն յետոյ տեղի ունեցան նաւասարդի մրցման խաղերը , որոնց մասին ծանօթութիւն տրուած է վարժարանին Հնդամեայ Տեղեկագրին հՀրդ երեսին մէջ : Մրցանակները , որոնք փրանսերէն փառակազմ գրքեր էին , բաշխուեցան 1909ի կաղանդի գիշերը :

Նաւասարդի մրցումներ 1910ին եւս տեղի ունեցան : Մրցանակները բաշխուեցան նոյն օրը՝ վարժարանին պաշտօնեաներուն , ուխտաւորներու և շրջակայ գիւղերու բնակիչներուն ներկայութեանը :

Հանդեսներ , Երկայացումներ . — 1908 Օգոստոս 19ին , Կայսեր գահակալութեան տարեկարգը վերադարձն ասիիթ ննծայեց սահմանադրական այն մեծ ցոյցին , որ տեղի ունեցաւ մասնաւորապէս զինուորականներու կողմէն :

Վարժարանին դուռը զարդարուած էր զոյնպգոյն զրօշակներով , կանթեղներով , լսովերներով և զեղեցիկ նորաշէն կամարածեւ վերասառութեամբ՝ որ կը բաղկանար «Ազատութիւն , Եղբայրութիւն , Հաւասարութիւն» բառերէն , հանդերձ անոնց թուրքերէնով «Հաջուածաւ» :

Երեկոյիան ժամը 1^{1/2} կրիստոնարդ սպաներու խումբ մը , ընկերակցութեամբ խուռն բազմութեան մ՞այցելեց վարժարանը , ուր ողեւորեալ ընդունելութիւն մը եղաւ անոնց : Պաշտօնականներէն մին խանդավառ խօսքերով զնահատեց Սահմանադրան վարժարանին մասուցած ծառայութիւնները , և , ի նշան յորդանաց , ջերմագին համբուրեց Բարերարին արձանը : Ներկաներն որոտնդուստ ծափանարութիւններով ընդունեցին այն բաժանը , զոր առաջարկեց զինուորական մը Սահմանարեան վարժարանի յարասեւութեանը համար և Հոգելոյս-Հիմնադրին ի յիշատակ :

Եւ որովհետեւ վարժարանին աշակերտները նոյն օրը Մրտաձոր կը գտնուէին , վարժարանին նախկին սաները՝ զովելի սպարսաստակամութեամբ մը՝ ո՛չ միայն կ'սպասաւորէին , այլ նաև կը նակին կարդապահութեամբ , ներքին գոհունակութիւն մը զգալով իրենց Մայր-վարժարանին փառաւորմն ի տես :

1908 Անգուի մէջ տրուեցաւ օրինակելի զրական-երաժշտական-թատերական երեկոյիթ մը :

Պաքուի հայոց Կուլտառական Միութեան արամանթիք խումբը 1908 Հոկտեմբերի վարժարանին մէջ տուաւ քանի մը ներկայացումներ՝ «Օթէլլօ» , «Պատուի համար» ելն . :

1908 Հոկտ . 19ին Սահմանարեան Աշակերտական Միութիւնը ներկայացուց «Շուշանիկ» ողբերգութիւնը :

1908 Դեկտ . 4ին , 5ին և 6ին Օտմանեան Երեփոխսանական Ժողովոյ բացման ասթիւ , վարժարանը՝ սուաշնորդութեամբ իր նուազախումբին , արժմանավել կերպար մասնակցեցաւ տեղի ունեցած արտասովոր հանդէսներուն և հակայական թափորներուն : Վարժարանին մէջ 1909 Յուլիս 1 և 2ին տրուեցան թատերական ներկայացումներ ի ներկայութեան քաղաքացին աշակերտութեան ներկայացումներուն և մերձակայ գիւղերու բնակիչներուն անգամն էր որ թատրոն կը տեսնէին :

Վարժարանի 1909 Ապրիլ 8ին և 9ին Կարմոյ հակասահմանադրական ցոյցերուն տիսրութեամբ ականատես ըլլաէ յետոյ , Ապրիլ 15ին ցնծութեամբ լսեց թնդանօթի 101 հարուածներն , որոնք կ'աւեսէին թուրքիոց երեսնամեայ բանակալին Սպատիւ-Համիտի գահնկէցութիւնը և Վէճ . Սուլթան Մէհմէտ և ի գահակալութիւնը :

1909 նոյ . 14ին , քրիստոնեաներուն զինուորապման կայս . հրովարտակին

ընթերցման առիթով, վարժարանն առաջնորդութեամբ իր նուագախումբին, մասնակցեաւ տեղի ունեցած հանդիսաւորութեանց :

1909 Դեկտ. 9ին արուեցաւ ցերեկոյթ մը՝ Խարախանեան Սրբազնին, վարժարանին Հոգաբարձութեան, ուսուցիչներուն և բոլոր աշակերանիրան ներկայութեանը :

1910 Յունուար 3ին Աշակերտական Միութիւնը յաջողութեամբ ներկայացուց «Դէպ ի Աշակերտական» առամբ և Ռուս-Թքական պատերազմը (Զարչը Սրթին աղան) կատակերգութիւնը: Յունուար 6ին և 7ին նոյն ներկայացումները կրկնուեցան՝ ժողովրդեան խնդրանքով:

1910 Փետր. 25ին Վարդանանց Զօրավարաց տօնին օրը Աշակերտական Միութիւնը սուսաւ ցերեկոյթ մը, ի յարգանս նոյն զօրավարաց: Հետևեալ օրը ներկայացուց երեք թատերական կտորներ. Տուսմ մը, Լ. Լեռոնիսանի «Սննոց մանր» և երկու կատակերգութիւն, «Փառնակէս»ի բանասեղծը և Յ. Յ. Պարոնեանի «Երեւեան Ատամանաբյժ»ը:

Ապրիլ 13ին Շէմսէտափն Սամի պէջի «Պէտա» ողբերգութիւնը արուեցաւ թուրքերէն լեզուով, հայ և օսմարազգի հանդիսականներուն ներկայութեանը:

Բոլոր այս ներկայացումներուն թատերական ու երաժշտական մասերը առնաւարակ յաջող սիցան և գնահատաւեցան հանդիսականներէն:

Վարժարանն ցնծութեամբ մանակցեցաւ 1909 և 1910 Յուլիս 10ի ազգային տօնիրու հանդէմներուն, ինչպէս նաև Վէճ. Սուլթան Մէհմէտ Ե. փ գահակալութեան տարեգարձին: Նոյն օրը վարժարանին պաշտօնեաները և աշակերանիրը քաղաքային միջնակարգ վարժարանի անօրէնին կարգադրութեամբ հիւրամիրուեցան նոյն վարժարանին մէջ:

Հոգեհանգիսներ. — Բառ սովորութեան 1906-1910 տարիներու մէջ եւս կատարուեցան Մայիս 19ին Հոգելոյս-Հիմնադրին Մայիս 31ին՝ Կ. Եղեանցի, նոյ. 1ին՝ Մարիսմ Կաղազիեանցի, Ա. Շատուրեանի և այլ բարերարներու յասուկ Հոգեհանգը պաշտօները (Տե՛ս Հնդկանայ Տեղեկագիրը, էջ 53):

Ս. Զատոլի Բ. օրը, ամէն տարի կ'օրհնուեին գերեզմանները վարժարանին ողբացեալ պաշտօնեաներուն՝ Պօլսո Դելվիսանի. Կորիւն Մկրտիչեանի, Միստ Ֆաձեանի և Գրիգոր Զաքարեանի, ինչպէս նաև վազամենովի աշակերտաց:

1908 Մարտ 23ին Գրիգոր Զաքարեանի մանուան սասային տարիլիցին առթիւ, յատկապէս Ս. Պատարագ մատուցուեցաւ և ի վերջո անոր գերեզմանին վրայ, Հոգեհանգամական պաշտօն կատարուեցաւ:

1910 Յունուար 2ին վարժարանին նորընտիր Հոգաբարձու Տիար Աւելիաք Տէր-Դարբիէլեան զո՞նաց ժանդանութի հիւրամիրութեան: Վարժարանը սպաց իր արժանաւոր Հոգաբարձուին այս վազահաս մանր, և Յունուար 9ին, անոր մանուան եօֆօրէքին ասթիւ, սպանանդէս մը կազմակերպեց, ի յարգանս հանդուցելոյն:

1906-1910 տարիներու ընթացաւարաններն եւս տարեկան քննութիւններէն անմիջապէս յետոյ, Ս. Պատարագ և Հոգեհանգամական պաշտօն մասացանել տուին՝ յանուն Հոգելոյս-Բարերարին, ի նշան իրենց երախտագիտութեան:

Վկայականներու բաւանան հանդէս. — Վարժարանը թէե 1906-1910 տարիներու մէջ միշտ բնթացաւարաններ ունեցաւ, սակայն միայն 1908ին և 1910ին վկայականներու բաշխումը կատարեց հանդիսաւորապէս:



6. ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐ

Քննութիւններ. — 1906-7 և 1907-8 տարիներու մէջ տեղի ունեցան եւսամսեամբ գրաւոր քննութիւններ: 1906-7 տարւոյ վերջը կասարաւեցան միայն հրապարակային հարցաքննութիւններ՝ վարժարձութեան, ծնողաց և Մէտրիդի պատասխանին Հոգաբարձութեանը:

1908-9ին աշակերտաներուն յարուցած խնդիրներուն հետեւանօք, միայն մէկ անգամ գրաւոր քննութիւն տեղի ունեցաւ (Մայիս 20-30): 1909-10ին կասարաւեցաւ 2 կիսամսեամբ գրաւոր քննութիւն: Հրապարակային քննութիւններն իրեւ հակամանկարմատական, վարժարանէն չնշուեցան 1907-8ին՝ Ուսուցչական Ժողովոյ որոշումով:

Շրջանաւարտներ. — Վարժարանը 1906-1910 ունեցաւ 44 լինթացաւարտ: Իստորիւ կը զրուին անոնց թիւերը՝ ժամանակական կարգով. —

1906-1907ին՝	5+1(*)=	6 լինթացաւարտ
1907-1908ին՝	13	»
1908-1909ին՝	17	»
1909-1910ին՝	8	»
Գումար	44	»
1891-1906 (Տե՛ս Հնդմ. Տեղեկ. էջ 50)	190	»
1891-1910	234	»
1909-1910 Արհեստանոցին	1	»
Համագումար	235	» Ուսումնական և Արհեստական բաժիններէն:

Վերսիչեալ հաջուղին համեմտու, Ամսասարեան հաստատութիւնը 1891-1910 տարիներու մէջ տուած է լինթացաւարտ, որոնցմէ

206ը Ուսումնական բաժնէն

իսկ 29ը Արհեստական »

Համագումար 235 լինթացաւարտ:

Երջանաւարտներու ամբողջական ցանկը՝ իրենց 1910 Օգոստոս 31ի վիճակը ներկայացնող ծանօթութիւններով՝ գրուած է տեղեկագրիս վերջը, իրեւ յաւելուած:

(*) Այս լինթացաւարտը, որ 1906-7 տարւոյ Զ. Պատարանէն մեկնած էր Յ. Կիսամեռակին, 1909-10ին ըրջանաւարտի յասուկ քննութիւն տալով վկայական ստացած է:

ՅՈՒՅԱԿ ԺԱ.

ՌԵՍՈՎՅԱՆՑԻ ՇԱԲԱԽԱԿԱՆ ԴԱՍԵՐՈՒ ԳՈՒՅՑԻ

ՄԱՍՆ Բ.

— 28 —

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՈՒՍՈՒՅՉՉԱՆՈՑ

Բացում. — Սանասարեան հաստատութեան վարիչ Մարմինները նկատելով որ ձեռնասա ու մանկավարժական հմտութիւն ունեցող ուսուցչներու պէտքն շա'տ զգալի է և ամբողջ Տաճկահայաստանը տակաւին մէկ ուսուցչանոց իսկ չունի, այդ ամենաանհրաժեշտ պէտքն հետզհետէ լրացնելու նպատակաւ, 1909-10 տարւոյ մէջ որոշեցին հաստատել Մանկավարժական դասընթացի մը՝ Սանասարեան հաստատութեան մէջ:

1909 նոյ. 2ին սկսան մանկավարժական դաստիօսութիւնները :

I. ՈՒՍՈՒՅՉՉԱՆՈՑԻ ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐԸ

Սանասարեան վարժարանի Բւսուցչական Մասմաժողովին որոշուած և նոյն հաստատութեան վարիչ Մարմիններէն ընդունուած նախնական ծրագրին համաձայն, 1909-10 տարւոյ մէջ աւանդուեցան հետեւեալ առարկաները. —

1. Բնդհանութ մանկավարժութիւն	շաբաթական	2	ժամ
2. Հոգեբանութիւն	»	2	»
3. Մանկավարժութեան պատմութեան	»	1	»
4. Մեթոտիկ	»	2	»
5. Բարոյական իմաստասիրութիւն	»	1	»
6. Բնախօսութիւն և դպրոցական առողջապահութիւն	»	1	»
7. Քաղաքային Տնտեսագիտութիւն	»	1	»
		10	»

Բարոյական իմաստասիրութեան սկզբունքներու դասերը՝ ուսուցչին յապողման պատճառուաւ՝ սկսան Փետր. 7ին և վերջացան Մայիս 3ին՝ ուսուցչին անձնական ակարութեան պատճառուաւ արձակուրդ տրուելուն հետեւանոք:

Տարւոյն վերջերն ուսուցչանոցի մանկավարժական ժողովը՝ մշակեց ուսուցչանոցի ուսմանց մանրամասն ծրագիրը՝ երկամեայ դասընթացքի համար:

Ի ստորեւ կը գրուի այդ ծրագրին շաբաթական դասերու ցուցակը, աւելի որոշ դաշտակար մը կազմել տալու համար:

Թիվ	ԱՌԱՐԿԱՆԵՐ	Ա. ՏԱՐ	Բ. ՏԱՐ	ԳՈՒՄԱՐ
1	Տեսական մանկավարժութիւն	2	—	2
2	Գործնական »	—	2	2
3	Հոգեբանութիւն և տամաբանութիւն	2	—	2
4	Մանկավարժութեան պատմութիւն	1	1	2
5	Բարոյական իմաստասիրութիւն (Ethik)	—	2	2
6	Ներածութիւն իմաստասիրութեան	1	—	1
7	Քաղաքային տնտեսութիւն (Economie politique)	—	1	1
8	Քաղաքացիական կրուքիւն (Instruction civique)	1	—	1
9	Բնախօսութիւն և դպրոցական առողջապահութիւն	1	1	2
10	Զեռարուես (Travaux manuels)	6	6	12
11	Մանկավարժական գործնական վարժութիւններ	1	5	6
12	Մարմնամարզ	2	2	4
13	Գիւղատնեսութիւն կամ Առանին տնտեսութիւն	6	6	12
14	Ազատ դասախօսութիւն (Conférence)	1	—	2
	Գումար	24	27	51
	Միացմաբ կը պակսի		1	
	Մնացորդ			50

Այս ծրագրի կազմութեան մասնակցեցաւ նաև Հայոց Միացեալ Ընկերութեանց կարնոյ շրջանակի վարժարանաց Տնտեսչ Պ. Մ. Մինասեան, որ նոյն Ընկերութեան Տնօրէն ժողովին աշխանուած էր՝ ըստ կանխորոշ կարգադրութեան՝ աջակցիլ ուսմանց ծրագրի պատճառութեան և գործակցիլ Ուսուցչանոցի բացումին, ամէն տարի 10 ուսմանող նոյն Ընկերութեան վարժարանաց համար հոն ուսուցչի պատրաստել տալու նպատակաւ։ Սակայն տարւոյն վերջը, Ընկերութիւնը հրաժարեցաւ համար գործակցութեան այս գեղեցիկ ձևոնարկէն։

2. ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑԻ ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Սահմանարեան վարժարանի Ուսուցչանոցի նպատակն է սպառաստել հայ վարժարաններու համար այնպիսի ուսուցիչներ և վարժուհիներ, որոնք իրենց ընդհանուր զարգացումով, մանկավարժական և դիւղամսնեսական հմտութեամբ, ուսուցման կարողութեամբ, ինչպէս և իրենց նկարագրով համապատասխանեն ներկայ կրթական պահանջներուն:

Ուսուցչանոց ընդունուելիք ուսանողները պէտք է ըլլան առ նուազն 18 տառ րեկան, աւարտած՝ միջնակարգ վարժարան մը, և կամ վարը լիշուած պայմաններով քննութիւն առողջներ: Ուսանողը պիտի ենթարկուի բժշկական քննութեամն, պէտք է ըլլայ մարմնապէս ուսուցչութեամն յարմար (ոչ-թոթովալուս, հաշմանդամ, և լուսական ամսագիւտ վարք:

Ուսանողը պիտի ներկայացնէ: —

Ա. Ուսման վկայական

Բ. Ծննդեան և մկրտութեամն վկայագիր

Գ. Անձնագիր (նուֆուու թէղքէրէ)

Դ. Յարւոք պաշտօնավարութեամն (եթէ կատարած է) վկայական:

Միջնակարգ վարժարանի վկայական չւնեցանոցի Մանկավարժական ժողովի ներկայութեամն, ընդհանուր զարգացման վերաբերեալ քննութիւն արտադարձ մատական արտադարձ որոշ ծրագրի մը, որ պիտի համապատասխանէ մօտաւորապէս Ազգ, բարձրագոյն նախակրթարաններու լութացքին:

Քննութեամբ ընդունուողները պարտասոր են, եթէ ժողովը հարկ անենէ, հետեւիլ Սահմանարեան վարժարանի բարձրագոյն դասարաններու որոշ առարկաններուն:

Ծոյլ և յոտի վարք ունեցող ուսանողները կ'արձակուին Ուսուցչանոցի Մանկավարժական ժողովի որոշմամբ:

Ուսուցչանոցի ծրագիրը կը պարունակէ մանկավարժական, դիւղամսնասական (ուսանողներու յասուկ) և ձեռարուեստի գիտութիւններ:

Ծանօթ. — Մանկավարժական դասախոսութիւններու զործնական վարժութիւնները կը կատարուին վարժարանիս ստորին դասարաններու մէջ՝ վերաբեսչն որոշմամբ և Կարմոյ Ազգ, վարժարաններուն մէջ՝ տեղայն Ուսումն, Խորհրդոյ արտօնութեամբ:

Ուսուցչանոցի մէջ ուսումն ծրի է:

Ուսուցչանոցի ուսանողներն են. — 1. Սահմանարեան Հաստատութեամն ծախութով և Սահմանարեան վարժարանի ընթացաւարտներէն ընտրուած 10 ուսանողներ: 2. Իրենց կամ բարերարներու ծախութով ապրող ուսանողներ:

Ծանօթ. — Բաց ի խակական ուսանողներէն վերատեսչն մասնաւոր արտօնութեամբ կրնան ընդունուել նաեւ որոշ թուով ազատ ունինդիրներ, ա'յն պայմանով որ անոնք ենթարկուին Ուսուցչանոցի օրէնքներուն և կարգերուն:

Քննութիւնները կը կատարուին գրաւոր, զործնական և բերանացի կերպով:

Յետ քննութեամն, արժանաւորներուն կը արուի Ուսուցչանոցի վկայական⁴ Ա., կամ Բ. կարգի ասափհանով: 1-3 առարկայի մէջ ակար երեցող ուսանողները վերաքննութեամն իրաւունք ունին:

3. ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

- | | |
|---|-------------------|
| Պ. Ա. Խաչարեան, որ դասախոսեց տարւոյն սկիզբը Մերուիկ և ապա ընդունութեամբ մանկավարժութիւն ^(*) , | շաբաթական 1-2 ժամ |
| Պ. Գ. Աբովյան՝ մանկավարժութիւն պատմութիւն | » 1 » |
| Պ. Ս. Սողիկեան՝ Հոգեբանութիւն | » 2 » |
| Պ. Մ. Մինասեան ^(**) Բնդէ. Մանկավարժութիւն. — } Զգացումներու և կամքի մշտկութեամն մասը } Զգացումներու և կամքի մշտկութեամն մասը } Զգացումներու և կամքի մշտկութեամն մասը } | 2 » |
| Պ. Խ. Պապյան՝ Քաղաքական Ցննիսագիտութիւն | » 1 » |
| Տ. Ա. Աւզունեան ^(**) Բնախոսութիւն և դպրոցական առողջապահութիւն | 1-2 » |
| Պ. Ս. Մանուկեան Բարոյական իմաստագիրութեամն և սկզբունքներ | 10-11 » |

Պ. Մ. Մինասեան իր դասախոսութիւններն սկսաւ 1909 Դիկու. 21ին և վերջացուց Մարտ 4ին՝ իր պաշտօնին հետեւանոք:

Տ. Ա. Աւզունեան որ սկսած էր դասախոսել նոյ ճին՝ շաբաթական 1 ժամով, ի վերջոյ շարունակեց շաբաթական 2 ժամով, մինչեւ 1910 Մարտ 1, երբ ստիպուեցաւ թողուլ իր դասերը՝ քաղաքէն մեկնելուն պատճառաւ:

Միւս ուսուցիչները շարունակեցին իրենց դասերը՝ մինչեւ տարւոյն վերջը՝ բաց ի Պ. Ա. Մանուկեանէն, որ 1910 Փետր. 7ին դասախոսութիւնները՝ հիւսնկութեամն պատճառաւ հայրենիք երթալուն հետեւանոք:

(*) Պ. Ա. Մինասեանի դասախոսած ատեն, Պ. Ա. Խաչարեան ստիպուեցաւ շաբաթական մէկ ժամ միայն դասախոսել:

(**) Պ. Ա. Մինասեան և Տ. Ա. Աւզունեան դասախոսեցին առանց փոխարինութեամն:

4. ՈՒՍՈՒՑՉԱՆՈՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

1909-10 տարւոյ մանկավարժական դասընթացքին հետեւողներու թիւն էր 71, որոնցմէ 26ը՝ իսկական ուսանող, իսկ 45ը՝ ազատ ունկնդիր:

Այդ դասընթացքին հետեւողներն էին առ հասարակ Սանասարեանի պաշտօն եաներ Սանասարեանի ընթացաւարտներ, ազգային և ամերիկեան վարժարաններու երկնուածաններ, որոնցմէ մէկ մասը գովելի յարաւուութիւն մը ցոյց տուաւ, դասընթացքին ամբողջ տեւողութեան միջոցին:

Դիտելի էր սակայն որ ասոնցմէ կարիւոր մէկ մասը պէտք եղած ուսումնաւ կան նախապատրաստութիւնը չունենալուն պատճառաւ, բայ արժանւոյն չէր կրնար օպտուիլ եղած դասախոսութիւններէն:

5. ՎԱՐԺԱՊԵՏԱՑՈՒՆԵՐ

Սանասարեան Հաստատութեան վարժապետացուներու յատուկ դրամագլխի տոկոսներով, մինչեւ 1906 օգոստս 31 պատրաստուած էին

1. Պ. Արամ Վահանեան, Կարնեցի, կահագործութեան համար
2. Պ. Յակոբ Մելքոնեան, Վանեցի, կոպլարարութեան "
3. Պ. Գէորգ Ճիշերձեան, Սրաբկիցի, տարրաբանութեան "
4. Պ. Սիմոն Աղապալեան, Կարնեցի, մեքենագիտութեան և բնաբանութեան "
5. Պ. Լեւոն Փասպանեան, Եւղովկիցի, Քրանակերէնի "

1906-7 տարւոյ մէջ, վարժարանիս ընթացաւարտներէն Պ. Խոսրով Պապայ-եան, որ տարի մը հետեւած էր Կարնոյ Քաղաքացին Միջնակարգ վարժարանի Զ. Գ. Գէորգ Ճիշերձեան Վաղարշիկի իսահիլէկէն ընթացքին, մեկնեցաւ Կ. Պոլիս թուրքերէնի ուսուցչութեան պատրաստուելու համար; Պ. Պապայ-եան Մէրձանի Խասիլիէկէն ընթացաւարտ ըլլալէ և վկատուելու համար; Պ. Պապայ-եան Մէրձանի թուրքերէնի ուսուցչութեան պատրաստուելու համար: Վարժութեանց (շահա) ճիւղին՝ թուրքերէնի ուսուցչութեան պատրաստուելու համար: 1900 Սեպտ. 12-ին Կարին վերադառնալով՝ ստանձնեց վարժարանին թուրքերէնի գլխաւոր ուսուցչութեան պաշտօնը:

Նոյն թուականին իրբեւ Քրանակերէնի զլիսաւոր ուսուցիչ Կարին վերադառնաւ վարժարանին ընթացաւարտներէն կ. Պոլսեցի Պ. Արամ Յակոբեան, որ 1906ին Բարիդի Ecole Normale Primaireէն, 1908ին S^t Cloudի Ecole Normale Supérieureէն: Վկայականներ ստացած է:

Քեցի Պ. Արագիս Մանուկեան, Գէորգեան Ճեմարանի ընթացաւարտներէն, որ կտակակատար կ. Եղեանցի Կարգադրութեամբ Խնամակալութենէն նպաստ ստա-

ցած է վարժապետացուներու յատուկ դրամագլխի տոկոսներէն, Բեղերապուրկի, Պերլինի և Լայբցիկի համալսարաններուն մէջ հայերէնի, իմաստափրութեան և գրա-կանութեան հետեւելէ յետոյ, 1910 Փետր. 1ին եկան Կարին և ստանձնեց Սահա-սարեան վարժարանի վրաբար հայերէնի և Ուսուցչանոցին բարոյական իմաստափ-րութեան գտանը:

1910 Ապրիլ 21ին նոյնակէս Կարին վերադառնաւ, իրբեւ հայերէնի ուսուցիչ, Սանասարեանի ընթացաւարտներէն Եօգդացի Պ. Մանուկէլ Տէտէեան, որ Վիհնացի Համալսարանին մէջ 1905ին ի վեր կը պատրաստուէր հայերէնի ուսուցչութեան: Պ. Մ. Տէտէեան Մայիս 3ին ստանձնեց դասերը Պ. Ս. Մանուկէեանի, որ իր անձնական տկարութիւնը գարմանել առաջ Քպի ուղեւորեցաւ:

1908-9ին Խնամակալութիւնը Խաղիս գրկեց վարժարանին ընթացաւարտնե-րէն Պ. Սարգիս Խաչատրիան, Մալաթիացի, գծագրութեան և խղոնկարչութեան մէջ կատարելագործուելու համար:

1909-10ին Վիհնաւ ուղարկուեցան վարժարանին ընթացաւարտներէն հետեւ-եալները, իրբեւ վարժապետացու: —

1. Պ. Սանասար Սողիկեանց, Կարնեցի, Պատմութեան, Գերմանիերէնի և Քա-ղաքային Տնտեսագիտութեան համար.

2. Պ. Գահան Հապէշէեան, Սերաստացի, Մանկավարժութեան և Բնական Գի-տութեանց համար.

3. Պ. Յակոբ Զուլհակեան, Եղեափացի, ուսուցութեան համար.

4. Պ. Սարգիս Շիշմանեան, Հիւմինիմանսուրցի, Բնաբանութեան և Տարրաբա-նութեան համար:

Նոյն տարւոյ մէջ վարժարանին Սան-Ռւսուցիչներէն Պ. Սիմոն Աղապալեան (Կարնեցի) Խնամակալութեան արածնութեամբ և միենայն գրամագլխի հասոյթներէն ընդունած նպաստներով Վիհնաւի Համալսարանին մէջ հետեւեցաւ Հանքարանու-թեան և Երկրաբանութեան, Մանկավարժութեան, Տարրաբանութեան, Գծագրու-թեան և «Modelage»ի: 1910ի ամբան մէջ քանի մը շաբաթ ալ հետեւեցաւ Լայբցիկի ձեռական աշխատութեանց յասուկ Ուսուցչանոցի գարնիթացքին և ապա վերադա-ռած վարժարան՝ վերաստանձնելու համար Ուսուցչական պաշտօնը:

Խնչպէս կը տեսնուի ոյն աեղեկութիւններէն, 14 երիտասարդներ, Հոգելոյս-Հիմնադրի ծանօթ կտակին չնորհիւ, մինչեւ ցարդ բարձրագոյն կրթութիւն ստացած են ու կը ստանան՝ ուսուցչութիւն ընելու համար:

Հոգաբարձութեան ձեռքով միայն 1906-1907 տարւոյ մէջ ուսուցչական պատ-րաստութեան համար ծախսուած է 1000 զրուց, (ուսանողի մը՝ ուսումնական, սնձ-նական և ճանապարհորդական ծախս), որուն փոխարէնը Խնամակալութիւնը վճարած է առանձնապէս:



Արհեստանոցի կահագործութեան ճիւղի վարպետութեան կոչուեցաւ Պ. Աւետիս Աղապալեան, Սանտասարեան Արհեստանոցի ընթացուարտներէն :

Վարժարանին նոր չէնքի ստորնայարկին ա'յն մասը, որ 1906-7ին կը ծառացէր իբրեւ մառան, միջանցք և դաշնականեւակ, վերածուեցաւ Արհեստանոցի ու պարզ հանդէսով մը 1907 նոյ. 1ին տեղի ունեցաւ Արհեստանոցին վերաբացումը :

Մ Ա Ս Ն Գ.

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՅ

1. ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒԹԻՒՆ

Արհեստանոցը 1906-7ին փակ էր :

Նոյն տարւոյ մէջ Արհեստապետ Պ. Արմոն Աղապալեան ներկայացուց Արհեստանոցի կահագործութեան ճիւղի վերաբացման համար առաջարկ մը և նոյն ճիւղի ծրագիրը զորս նկատի առին Վարժարանին Հոգաբարձութիւնն ու ինսամուկալութիւնը :

Պատրաստուեցան Արհեստանոցի կազմակերպութեան յաստեկ կանոնագիր մը և կահագործութեան քառամեայ ծրագիրը :

Արհեստանոցի մասակարարութիւնը անջատուեցաւ վարժարանին մասակարարութիւնն : Զնջուեցաւ կահագործութեան վարպետին ամսական տալու, ինչպէս նաև չաստատութեան դրամալ առաջձ, և այլն գնելու զրութիւնը :

Ակրունքով որոշուեցաւ Արհեստանոցը յանձնել կահագործութեան վարպետի մը, պայմանաւ որ վարժարանը տայ .

1. 50 սոկի դրամազլուխ, 4 տարուան համար, առանց տոկոսի .

2. Տեղը, վարժարանին նոր չէնքին տակը, պողոսայի վրայ .

3. Վարպետին և իր հեա բերելիք 3 օգնականներուն յերեկուան ճաշ .

4. Պէտք եղած գործիքները և սեղանատախակները (աէզկեան) .

5. Վսուելիքը և լոյսը, ըստ ճշդուած քանակի :

6. Աշակերաները՝ որոնք Ա. տարին պիտի ըլլան՝ 4 հոգի, Բ. տարին, 8 Գ. տարին՝ 12, Դ. տարին՝ 16, իսկ այնուհետեւ արհեստաւոր աշակերաներու թիւը պիտի ըլլայ միշտ 16:

Իսկ յանձնառու վարպետը պիտի պարտաւորուէր 1, Զորս տարուան մէջ կահագործութիւն սորվեցնել վարժարանին իրեն յանձնուած աշակերաներուն, ըստ ծրագրին: 2. Կորպուած ու վեսասուած գործիքներուն փոխարէնը վարժարանին վճարել . 3. Զորս տարին լրանալէն յետոյ, վարժարանին վճարել փոխ առած 50 լիրա դրամազլուխին փոխարէնը :

Արհեստանոցին շանս ու վեսար վարպետին պիտի վերաբերէր :

Յանձնառու վարպետը այս պայմանները յարգելու համար, իր կողմէն 100 սոկույ երաշխառոր մ'ալ պարտուոր էր ներկայացնել Հոգաբարձութեան :

2. ԱՐՀԵՍՏԱՆՈՅԻ ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Արհեստանոցը Սանտասարեան Հաստատութեան մէկ մասը կը կազմէ :

Ուսանելի արհեստն է առաջմ կահագործութիւնը, որ ունի քառամեայ ընթացք : Ուսում . — Աշակերաները կը հետեւին Վարժարանին ուսումնական բաժնի միայն թուարանութեան և գծագրութեան դասիրուն՝ Գ. և Դ. դասարաններուն հետ, իսկ առանձինն կուսաներին կահագործութեան վարպետէն փայտի արհեստագործութեան վերաբերեալ զիսելիքները :

Ընդունելութեան պայմաններ . — Արհեստանոցը մասնել վափաքող աշակերար պէտք է որ կոմ արդէն լրացուցած ըլլայ վարժարանին Բ. դասարանին ընթացքը կամ ազգային նախակիրթարանի մը ըրջանիր :

Պահանջուած տարիքն է 15-17: 14 տարիկան աշակերաներն եւս կ'ընդունուին՝ Բ. դասարանին մէջ պատրաստուելու պայմանով: Անհրաժեշտ է որ Արհեստանոցի աշակերարը ունենայ առողջ կազմ, բարի վարք և արհեստի բնդունակութիւն, և ներկայացնէ ծննդեան ու մկրտութեան վկայական . Օսմանիլ Թէզբէրէ, ինչպէս նաև առանց աշակերարութիւն վկայացոյցը :

Կրնոյ ըլլալ ցերեկեալ կամ զիւերօրիկ, ձրիավարծ կամ քուակաւոր :

Պարտի վճարել միանուագ մուաք (գիշերօթիկի յատուկ) 3 0 . Ա.

Գիշերօթիկի տարիկոչակ (մնունդ, հագուստ, և լն. Արհեստանոցին) 12 »

Ցիրեկեացի » (ցիրեկուան ճաշը միայն) » 3 »

Ծրագիր . — Կահագործութեան համար մշակուած ծրագրով, աշակերար 4 տարիոն ընթացաւարտ կ'ըլլայ՝ կահագործութեան օգնական վարպետի աստիճանով :

Վարչութիւն . — Վերատեսուչը Արհեստապետի առաջարկին վրայ կ'ընարէ վարպետը, որ համարատու է Արհեստապետին և Վերատեսչին :

Արհեստապետը մօտէն կը հակէ կահագործութեան ծրագրին և պայմաններու անթիրի գործագրութեան վրայ, ու իր առաջարկներն ի հարկին կը ներկայացնէ Վերատեսչին :

Ելիքացոյց եւ Հաւիւ . — Արհեստանոցն ունի իր ուրոյն ելմտացոյցը, որ կը պատրաստուի Հոգաբարձութիւնն և կը վասերացուի ինսամակալութիւնն :

Արհեստանոցի հաշխաները կը բանուին վարժարանին հաշխաներէն անջատարար :

Արհեստանոցի կահագործութեան ճիւղի աշակերաները իրենց քառամեայ ըըրջանի վերջին 2 տարուան մէջ, իրաւոնք ունին ընթացաւարտ ըլլալէ յետոյ, սատա-

նուլու իրենց աշխատութեամբ շինուած կահերու զուտ շահուն 25°/0ը, Այս հաշիւը կը բանէ Արհեստապետը, որ սպարասուոր է 6 ամիսն անդամ՝ մը Վերատեսչին ներկայացնել աշակերտներու շահաբաժններու հայիւները զատ զատ, ըստ այնու Հաշուակալին արձմնապետ տալու համար :

Տեղեկագիր . — Հոգաբարձութեան Արհեստանոցին տնտեսական վիճակը տեղեւ կազրով մը կը ներկայացնէ իյնամակալութեան, իսկ Վերատեսչը Արհեստանոցի առողջական, բարոյական և արուեստական վիճակը՝ Հոգաբարձութեան միջոցաւ՝ կը ներկայացնէ իյնամակալութեան, իբրև ստրեկան համարատութիւն :

3. ԱՐԵՍԱՆՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Արհեստանոցի կահագործութեան ճիւղն ունէր . —

1907- 8ին՝ 4 աշակերտ, որոնցմէ 2ը գիշերօթիկ, 2ը ցերեկեայ .

1908- 9ին՝ 9 » բոլորն ալ ցերեկեայ .

1909-10ին՝ 8 » որոնցմէ 2ը գիշերօթիկ, 6ը՝ ցերեկեայ .

Բաց ի ասոնցմէ կահագործութեան վարպետը միշտ ունէր, ըստ սպայմանի, դուրսէն բերուած 3 աշակերտ, որոնցմէ 1-2ը իբրև օգնական վարպետ : Արհեստանոցը, որ 1886ին բացուած էր, ընդունենիր ունեցաւ . —

1. Աւումնական բաժնի ինչ ինչ առարկաներու և արհեստին հետեւող 100 աշկրտ .

2. Միմիայն արհեստի հետեւող 69 »

Գումար 169 »

Վերջին եռամենյ շրջանի մէջ, իբրև նոր աշակերտ ընդունուեցան 16 հոգի, որոնցմէ միայն մէկը՝ Մարտիրոս Քիւրքնեան յարատեւութեամբ հետեւեցաւ կահագործութեան ճիւղի ընթացքին և 3 ատրուան մէջ արժանի նկատուեցաւ ստանալու վկայական՝ կահագործութեան վարպետի օգնականի աստիճանով :

Արհեստանոցը 1886-1906 ունեցած է 28 ընթացաւարտ, որոնցմէ 17ը } Միայն

1909-10ին ունեցաւ 1 » 1p } արհեստի

Ընդունենիր 29 18 } հետեւող :

Վերջիշեալ 28 ընթացաւարտներէն 21ը կահագործութեան, իսկ 8ը կոպղարաբութեան ճիւղէն վկայական ստացած են :

4. ԱՐԵՍԱՆՈՑԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արհեստանոցը 1907-1910 տարիներու մէջ արտադրեց զանազան սպարզ և քանդակագարդ կահեր (աթոռ, գրասեղման, պահարան, մնառուի, եռուանի, սպատերի շրջանակ, ևլն.) ու բրաւ զանազան նորոգութիւններ :

5. ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1906-1910 տարիներու մէջ աշակերտներէն շատ քիչերը ատեն ատեն զբաղեցն կազմարարութեամբ :


1907-8ին Ա. Պաստրանի աշակերտները հետեւեցան կազմարարութեան, իբրև ձեռական աշխատութեան :

ՑՈՒՑԱԿ ԺԲ.

Ցուցակ արհեստի նետեւող աշակերտաց

ԹԻՒ	ԾՆՆԴԱՎԱՑՐ ԱՇԱԿԵՐՏԱՑ	ԶՐԻԱՎԱՐԾ
1	Կարին	11
2	Վան	2
3	Բաբերդ	1
4	Քղի	1
5	Կարս	1
	Գումար	16
	4886-1906 զանազան ժեղերէ (Տե՛ս Քանամեալ Տեղեկագիր էջ 36րդ և Հնգամեալ Տեղեկագիր էջ 42րդ)	53
	Համագումար միայն արհեստի նետեւող աշակերտներու	69

U U U U Φ.



ՄԱՍԿԱՐԱՐՈՒԹԵՒՆ

I. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՅԱՏԿԱՑԱԾ ՀԷՆՔԵՐ

Վարժարանը 1906-1910 տարիներու մէջ եւս մնաց Կարնոյ Հայոց տղջկանց համար կառուցուած վարժարանին մէջ, համաձայն ա'յն պայմանագրին(*), որ 1902ին փոխանակուած է Կարնոյ Ազգ. Թաղ. Խորհրդոյ և Սահմանադրեան Վարժարանի Հոգաբարձութեան միջեւ, և որ հաստատուած է Կարնոյ Քաղ. Փողովէն և վաւերացուած՝ Ազգ. Կեդր. Վարչութեան կատար Փողովէն (Տե՛ս Հնդամեայ Տեղեկագիր Սահմանադրեան Վարժարանի էջ 24-26):

Սրհեստանոցի վերաբացման համար 1907 Հոկտեմբերի 1-ին Վարդարանին «Նոր-Եւնք» ըստուած հասուածին տակը գտնուած մասնը, յարակից գաշնակառանեակ-ուուցարանը և միջանցքը, ինչպէս յիշուեցաւ նախուպէս, վերածուեցան արհեստանոցի՝ միջնորմերը քակելէ և հարկ եղած փոփոխութիւններն ընկելէ յետոյ; Իսկ հին Սրհեստանոցը վերածուեցաւ զրբենի ամբարանոցի:


1908-9ին հին Արևելաստոցին մէկ մասը, իրրեւ ժողովարան, յատկացուեցաւ Սահմանադրեան նորակազմ մարմնոյն, որ, իր ծախքով, բրաւ հարկ եղած բարեկոփառութիւնները, իսկ մասցեալ մասը՝ միջնորմով մը բաժնուելով՝ ըստ առաջնոյն մաս իրրեւ գործինի ամբարանոց :

1909 նոյ. մէջ, Նոր-Շէնքի տարրագանական աշխատանոցին և զրադարձունին միջնորմի քակել տրուելով՝ այդ երկու բաժանումները վերածուեցան բնդարձակ սրահի մը, որ յատկացուեցաւ տարրագանական, բնագիտական և մանկավարժուկան դասախոսութեանց, իսկ զրադարձանի համար Նոր-Շէնքին ուրիշ մէկ սենհավակը յատկացուեցաւ :

1908-9ի վերջերը շինուեցաւ արեւու ժամացոյց մը, որ հաստատուեցաւ մարդարանի կողմբ, պատուանդանի մը վրայ և գործածութեան դրուեցաւ 1909-10ին:

Հայեաս-Հիմառամին ռուսակա - 1883 Մայիս 16ին և Յունիս 26ին գնումած է

(*) Բայց պայմանագրի, Վարժարանը թագ. Խորհրդարանը կը վճարէ իրքեւ շնորհին 400 օսմէ սուլի, կը հոգայ շնորհի նորոգութեան ծախքերը և կը վճարէ սպահութեանը:



Զ կտոր արտ (Կալնոյ Կէղայ թաղին ըլլակայքը) Հաստատովեեան սեփական չէնքի կառուցման համար :

Բռնսպեաական շըջմանի մէջ, կառավարական սեղմումներու պատճառու, կարելի չեղաւ կառուցանել Սահմասարեան վարժարանի սեփական շէնքը, որուն համար բարերարը 50,000 բաւակի կատած էր:

Սահմանադրութեան հոչակումքն յիսոյ , վարժարանին Վարիչ Մարմնները շենքի շինութեան խողով սկսան զբաղիլ լրջօրէն և կը յուսան որ մօտ ատենի մէջ , նոյն արտերան վրաց կառուցանել տան Հասասառութեան սեփական շէնքը՝ օրինական ձևուակերպութիւնները կատարել տապէ անմիջապէս վերջը :

2. ՎԱԺԱՐԱՆԻՆ ԿԱԼՈՒԹԱԾՆԵՐԸ

- Վարժարանն ունի հետեւեալ կալուածները՝ կ. Պոլսոյ և Կարնոյ մէջ, —
1. կ. Պոլիս, Սիրքէնի, Տէմբր-Դաբու փողոցը գտնուաղ «Մանասար խան»ը;
2. » Ֆէրիդիւզ, 1000 քառ. կանգուն գետին;
3. Կարին քաղաքին մէջ 9 կտոր արտ;
4. Կարնոյ գաշտի Աղվէրան գիւղին մէջ ագարակ մը, որ կը բաղկանայ 59
արտէ, 8 մարգագետինէ, 1 տունէ, 2 յարդանոցէ, 1 աղբանոցէ և 1 գետինէ;
5. Կարնոյ գաշտի Աղվէրան գիւղին մէջ տան գետին մը (արտա)՝ պարտէզզով
և կտորնոց (արտամբալիք):

6. Կարին քաղաքին և Կեդ գիւղի սահմաններուն մէջ գտնուող 2 արտ :
Սահմանար խանը, ինսամակալութեան հոգածութեան և ջանքերուն շնորհիւ ,
տարիեկան աւելի քան 2730 օսմ . իիրա զուտ հասովիթ կր բերէ :

Կարհոյ քաղաքամիջի արտերը վարձք կը բերեն տարեկան 12 ռակի, որուն չուպչ 3¹/₄ լիրան կը վճարուի իբրեւ կալուածառուքք :

Աղվէրանի տպարտկը, ինչպես բանապիտական, նոյնպէս և սահմանադրական շրջանի մէջ, յանիբառափ կը մնայ և ազ Եանեաօղու Հաճի Մէհմէտի ժառանգորդներուն ձեռքը, հակառակ Պետական Խորհրդոյ որոշման և նախարարական հրամանագրերու Վարժարանին Վարիչ Մարմիները չանքեր չեն լինայիր վերաստանալու բանատիրուած այլ տպարտկը:

Կարին քաղաքի և Կէզ գիւղի սահմաններուն մէջ գտնուող 2 արտերը, որ տարեկան $1-1\frac{1}{4}$ սուկի վարձք կը բերէին, մահլիւլի վտանգէն յառաջիկոյին ազատելու համար, 1909-10ին վաճառուեցան Վարչի Մարմններու կարգադրութեամբ:

Վարժարանին կալուածներու գնման և այլ կարեւոր կէտերու մասին անհրաժեշտ տեղեկութիւններ տրուած են վարժարանին Քամամեայ և Հնդամեայ Տեղեկագիրներուն մէջ (Տե՛ս Էջ 84-87 և 69-70) :

3. ՀԱՍՈՅԹՆԵՐ ՈՒ ԾԱԽՔԵՐ

ա.) Սանասարեան վարժարանի

Ա. ՀԱՍՈՅԹՆԵՐ

1906-7 տարեցը ակսեալ վարժարանին հաշխւները բոնուեցան օսմ. լիրան 100 դրոշի հաշուով :

Հաշուական գլուխները, որ առաջ 23 էին, նոր դասաւորումով վերածուեցան 17ի — մէջն ըլլալով Արհեստանոցի հաշխւն ալ :

1907-8ին Արհեստանոցի մատակարարութիւնը վարժարանին բոլորովին անշատուելով՝ ըստ այնմ առանձին բանուեցան Արհեստանոցի հաշխւները :

Ինչպէս կ'երեւի Սանասարեան Վարժարանի քառամեայ հասոյթներու և ծախչերու բնդհանուր հաշուեցոյցէն, վարժարանին նիւթական մատակարարութեան գլւխաւոր միջացներն էին :

1. Արժէթղթոց տոկոսներ :
2. Կալուածական հասոյթներ .
3. Աշակերտական թոշակներ և այլ տուրքեր .
4. Զանազան հասոյթներ կամ մուտքեր, որոնց մասին հարկ կը համարուի տալ ամփոփ տեղեկութիւններ :

1. Արժեթղթոց Տնկոսներ . — Բարերարին իր վարժարանին համար թողուցած դրամագլուխը, կոլուտճներու գնման յատկացուած մոտէն վատ, ըստ կատակին արժէթղթոց վերածուելէ յետոյ ի պահ դրուած է Ռուսիոյ Պետական Դրամատունը :

Արժէթղթոց տոկոսներէն Խնամակալութիւնը սոյն քառամեայ շրջանէն առաջ կը վճարէր . — 1. Իրրեւ սովորական նպաստ տարեկան 1200. — լիրա .

2. Իրրեւ արտասովոր նպաստ, ելմտացոյցով նախատեսուած կոմիթրական բացը :

Սակայն, 1906-7 տարեցը ակսեալ, նոր ելմտացոյցի կազմութեան առթիւ ջնջուեցաւ «Առլորտական» և «Արտասովոր» նպաստներ նշանակելու դրութիւնը և պատշաճ դատուեցաւ նշանակել «Հողելոյս-Հիմնադրի տարեկան նպաստ» բանաձենն ներքեւ պէտք եղած գումարը :

Վարժարանին 1892-ի Հիմնական Կանոնադրութեան համաձայն, ելմտացոյցով նախատեսուած ծախքերը վճարուելէ յետոյ, Հաստատութեան իւրաքանչիւր տարւոյ մատակարարութեանէն աւելցած դրամով կազմուած է պահեստի դրամագլուխ մը, զոր միայն Խնամակալութիւնը կարող է ծախսել վարժարանին արտակարգ պէտքերուն համար :

Ասկէ վատ, վարժարանին Հիմնադրի Բարերարին կոտակած հասոյթներու հարիւրին առանձ (10%) կազմուած է վարժապետացուներու պատրաստութեան յատուկ դրամագլուխ մը:

Բարերարէն, Մարիսմ Մ. Կաղաչկեանցէն, Առաքել Ծատուրեանէն և Կարուպէտ Եղեանցէն կատկուած գումարները կը կազմին Սանասարեան Հաստատութեան անձեռնմիսիլի դրամագլուխով :

Մայր-Դրամագլուխոյ, Պահեստի և Վարժապետացուներու պատրաստութեան յատուկ դրամագլուխներու քանակներուն և աննոց շահագործման վերաբերեալ ամփոփ տեղեկութիւններ դրուած էն Սանասարեան Հաստատութեան 1910 տարւոյ հոչուեցոյցներուն և Բնդհանուր հաշուեկշուն (Bilan) մէջ :

2. Կալուածական Հասոյթներու մասին կարեւոր տեղեկութիւնները տրուած են արդէն «Վարժապահնին Կալուածները» գլխուն ներքեւ : Կ'արժէ հսու յիշել միայն որ Սանասարեանի տարեկան գուած հասոյթը՝ վարժարանին ներքին հասոյթներուն համ՝ կը բաւէ այսօր գոցելու Սանասարեան Վարժարանի և Սանասարեան Ռւսուցչամուցի բոլոր ծախքերը, առանց դպչելու արժէթղթոց տոկոսներուն, որուն մի մասն յատկա բոլոր ծախքերը, առանց դպչելու արժէթղթոց տոկոսներուն ծախտոց : Նշանակելի է նաև սո'յն ցած է վարժապետացուներու պատրաստութեան ծախտոց : Խանակելի է սանասարեան գրեթէ 9% համեմատութեամբ են, մինչ արժէթղթոց տոկոսները իրր 4¹/₄ % :

3. Առակերտական բռւակներ եւ այլ տուրքեր . — 1906-7ին գիշերօթիկ թօշակուորները, բացի 1էն — որ 16 լիրա գեղշեալ թոշակով լնդունուած էր — վճարեցին 12տկան լիրա տարեկութակ և իրենց ծնողքը հոգացին անկողնոյ և մահճակալի, հաւագուածի և կօշխիկ, գասազգրքերու և գպրոցական այլ պիտոյքներու, ինչպէս նաև զեղերու ծախքերը : 1907-8ին, ըստ նոր որոշման, գիշերօթիկները վճարեցին իրերը արժեթղուակ 1500ական զրուց ամէն ծախք վարժարանին վրայ ըլլալու պայմանաւ : Նորեկներն, ըստ առաջնոյն, պարտաւոր էին վճարել իրեւ մուտք 300ական զրուշ : Արձակուրդի միջացին վարժարանը մնացած աշակերտները կը վճարէին 100ական զրուշ իրեւ արձակուրդի տուրք :

Այս պայմաններն անփոփոխ մնացին մինչեւ 1909-10 տարւոյ վերջը :

1906-7ին սկսեալ, ըստ որոշման Հոգաբարձութեան, վարժարանին պատրաստական, Ա. և Բ. գասարաններու ցերեկեայ թոշակաւոր աշակերտները վճարեցին իրեւ արժեթղուակ 600ական զրուշ, իսկ Գ. Դ. և Զ. գասարաններու աշակերտները՝ 700ական զրուշ :

Կամաւոր առարկաներէն դաշնակի կամ ջութակի հետեւողները վճարեցին 300ական զրուշ, իրեւ գործիական երածշատութեան տուրք :

Աշակերտական հին թոշակներէն և այլ տուրքերէն աննշան գումար մը միայն կարելի եղած է գանձել : 1906-10 տարիներու մէջ գանձուած է Լ. 0/էն 6352¹/₄ զրուշ՝ առաւելապէս այդ տարիներու հաշխւներէն մնացած պահմանչքներէն :

Քառամեայ շրջանի մէջ աշակերտական գանձուած է իրեւ թօշակ, արձակուրդի և գործիական երածշատութեան տուրք Լ. 0/էն 340,522 զրուշ :

1906-7 և 1909-10 տարիներու մէջ «Աշակերտներ» հաշուական գլխոյ հու սոյթները պակսած են նախընթաց 1905-6 և 1908-9 տարիներու մէջ երեւան եկած աշակերտական խնդիրներու հետեւանոք թուակաւոր աշակերտաց թիւը պակսած ըլլալուն պատահաւութ :

4. Զանազան հասոյքներ . — Քառամիայ հաշուեցոյցին մէջ նշանակուած բացատրութիւններն ու ծանօթութիւնները այս հասոյթներու մասին որոշ գողափար մը կազմել կուտան արդէն :

Բ. ԾԱԽՔԵՐ

1906-10 տարիներու մէջ ևս վարժարանին ծախքերը տեղի ունեցած կարնոյ չոգաբարձութենէն պատրաստուած և ինսամակալութենէն վաւերացուած ելմասցոյցներուն և արուած մասնաւոր վարկերուն համաձայն :

Քառամիայ հաշուեցոյցին կը տեսնուի որ ծախքերը 1907-8, 1908-9 և 1909 1910 տարիներու մէջ զգալի կերպով տւելցած են՝ զլիսաւորաբար եռամիայ արտակարգ սրութեան և 1907-8 ու 1908-9 տարիներու մէջ աշակերտաներու շատնալուն պատճառաւ :

Հոգաբարձութիւնը, որ համարատու է ինսամակալութեան, ամէն տարի, կունուաւորաբար, անոր կը ներկայացնէ իր ձեռամբ տեղի ունեցած մասակարարութեան մանրամասն հաշուեցոյցը՝ հանդերձ մատեսական տեղեկագրով :

Ինչպէս կ'երեւի քառամիայ հաշուեցոյցին, վարժարանին ծախքերը բաժնուած են հետեւալ 16 զլուխներուն . —

- | | |
|----------------------------|--------------------------------|
| 1. — Վարժարան . | 9. — Առաջապահութիւն . |
| 2. — Կահ-կարասիներ . | 10. — Վասելիք-լուսաւորութիւն . |
| 3. — Դասական միջոցներ . | 11. — Գրադարան-թանգարան . |
| 4. — Կրօնական-Պաշտօնական . | 12. — Արհեստանոց . |
| 5. — Բնդհանուր Ամսականք . | 13. — Կալուածք . |
| 6. — Մնալեղինք . | 14. — Գիւղատնտեսական ճիւղ . |
| 7. — Հանդերձեղինք . | 15. — Այլ եւ այլք . |
| 8. — Մաքրութիւն . | 16. — Արտակարգ : |

Հարկ կը համարուի այս զլուխներէն իւրաքանչիւրին վրայ տալ ամփափ և հակիրճ ծանօթութիւններ :

1. Վարժարան հաշուական զլուխը կը պարունակէ Ա. Վարժարանին Ազգայի պատկան շէնքերու 100 լիրա տարեվարձը . Բ.) Շէնքերու և գոյքերու տարեկան ապահովագինը՝ 13 33^{1/4} լիրա . Գ.) Շէնքերու նորոգութեան, պահպանութեան և բարեփոխութեան ծախքերը, որոնք տարուէ տարի կը փոխուին :

2. Կահ-կարասիներ . — Նոր գնուած բոլոր կահ-կարասիներու, անկողնոյ կազմաձներու, սեղանի սպասներու, պղնձեղիներու, վառարաններու և լամբարներու արժէքները, ինչպէս նաև ասոնց բոլոր գութեան ծախքերը, որոնք տարուէ տարի կը փոխուին :

1907-8ին գնուած են վարժարանի սպարտէզին համար միծ լամբար մը (920^{3/4} դրուշ արժէքով) և գիշերապահի յատուկ ժամացոյց մը, աշակերտաներու շատնալուն

պատճառաւ շինել տրուած են նոր գրասեղաններ, գնուած են սեղանի սպասներ և կախովի լամբարներ, որոնց հետեւածոք այս զլիսոյ ելքը բարձրացած է 15255 դրշ . Վիենոյն պատճառավ 1908-9ին այս զլիսոյ ծախքն եղած է 11860^{1/4} դրուշ :

3. Դասական Միջոցներ . — Այս զլիսոյ սարուբաժանումներն են Ա. Դասարդքեր, Բ.) Դասական Պատույքներ, Գ.) Երաժշտական գործիքներ և պիտոյքներ, Դ.) Բնագիտական և քիմիական նիւթեր, Զ.) Զմուշկ . եւայլն :

1009-10ին զնուեցան բնագիտական գործիքներ ու նիւթեր, որոնց արժէքը՝ 100 օսմննեան սակի ինսամակալութենէն ուղղակի վճարուած ըլլալով՝ արձանագրուած է անոր հաշուոց մէջ :

1906-7ին գիշերօթիկ աշակերտներէն 12 սակի տարեթոշակ վճարողները իրենք հոգացած են, ի միջի այլոց, իրենց գրենական ծախքերը,

Վարժարանը կը հոգայ բոլոր գիշերօթիկ (թոշակաւոր և ձրիավարժ) աշակերտներու, ինչպէս նաև ցերեկեայ ամէնէն կարօտ ձրիավարժներու գրենական պիտոյքները :

4. Կրօնական-Պատօնական . — Այս զլուիքը կը պարունակէ հոգենմոդիտաներու, անօրնէնքներու և այլ կրօնական ծախքերը, թղթակցութեան և հեռագրի, տպագրութեան գիւղական պիտոյքներու, հիւրասիրութեան և գլուցական հանդէներու յատուկ ծախքերն, ինչպէս նաև կառքի վարձքերը :

5. Էնդիանուր Ամսականի . — Այս զլիսոյ ներքեւ արձանագրուած են Վերատեսչին, Աւուցիչներուն, Վարառուղար-Հաշուակալին, Սրտաքին ու ներքին Մատակարարներուն տարեթոշակները, Աւուցչի մը հանգստաթոշակը և ծառաներու վարձքերը:

6. Սննդելինք . — Այս զլիսոյ ծախքը կը պարունակէ վարժարանին ներսը բնակող պաշտօնականներուն (Ներքին-Տնօրին, Կառավարիչներ, Մատակարարներ, և լին), գիշերօթիկ աշակերտներուն և ծառաներուն ամրող օրուան, ինչպէս նաև բոլոր ցերեկաններուն ցերեկաւան մնունդի ծախքերը :

Ցերեկեայ ձրիավարժներէն ամննէն կարօտները (տարեկան 7-8-9 հոգի), մասնաւոր թոյլատութեամբ, նախաճաշը և բնդիքիքը ևս կ'ընկն վարժարանին մէջ :

Վարժարանին մէջ ատեն ատեն կը ճաշեն նաև պաշտօնականներէն ոմանք՝ փոխարէնը վճարելով :

Այս զլիսոյ ծախքը՝ աշակերտներու և ծառաներու թուոյն և պաշտրելիններու պատճեան կամ տարանութեան համեմատ՝ փոխական է :

7. Հանդերձեղինք . — Վարժարանին կը վճարուին գիշերօթիկ ձրիավարժ և լիաթոչակ աշակերտներուն ներքին ու արտաքին հազուասներու, կօշիկներու, թաշկենակներու, երեսորբիչներու և գուլպաններու արժէքները, ինչպէս նաև անոնց գութեան ծախքերու փոխարէնը :

8. Մարդուրին . — Այս զլուիքը կը մէջ կը պարունակէ 2 լուացարարուհներու և վարժավիրային վարձքերը, օճառի արժէքը և կառավարիչներուն, աշակերտաց ու ծառաներուն բաղնիքի վարձքը :

9. Առողջապահութիւն . — Այս զլիսոյ մէջ են բժիշկներու և ատամնապոյժին

վճարուած այցագները, դեղերու արժէքները, օդափոխութեան և շրջագայութեան յատառի ծախքերը:

Վարժարանին բոլոր պաշտօնեաները եւս Հաստատութեան ձրի կ'ընդունին բժշկական այցելութիւն:

10. Վանելիք-լուսաւորութիւն. — Այս զլիսոյ ծախքերու ստորաբաժմումներն են Ա. Կալմի փայտ, Բ. Մայրի փայտ, Գ. Ածուխ, Դ. Աթար (կշգուր), Ե. Քարիւղ և Զ. Այլեւալլք (լուցիկ, լամբարի շիշ, պատրոյդ, մոմ, ձիթափուզ, ելն):

1909-10ին այս զլիսոյ ծախքը սալորականին 70-80 ոսկի աւելի եղած է, որովհետեւ վարժարանական կարգադրութիւններու յապաղման հետեւածոք ուշ տրրուեցաւ վասելիքի և այլ պաշտօնելիքներու գնման արտօնութիւնը,

11. Գրադարան-Թանգարան. — Վարժարանին, ինչպէս նաև Ռևուցէանոցին համար գնուած զիտական և ընթերցանութիւնն յատուկ հայերէն, թուրքերէն և գերմանէրէն գրքերը, երաժշտական հանդէնին և կտորներ, մանկավարժական գրքեր ու ձեռնարկներ այս զլիսոյ ներքեւ արձանագրուած են: Վարժարանին նույիրուած գրքերու, ձեռագիրներու, հին դրամներու, լրագիրներու և պարբերականներու արժէքներն եւս այս զլիսոյ ներքեւ արձանագրուած են իրեւ մուտք ու ելք:

12. Արհեստանոց. — 1906-7ին Արհեստանոցը թէե գոյ էր, սակայն պատշաճ դատուած է այս զլիսոյ ներքեւ արձանագրել Արհեստանոցի հաշւոյն եղած գանձումներն ու վաճառումները:

13. Կալուածք. — Վարժարանը կը վճարէ Կարնոյ քաղաքամիջի 9, քաղաքին և կէզ գիւղի սահմաններուն մէջ գտնուող 2 տրամերուն (909-10ին վաճառուած), ինչպէս նաև Աղվէրանի մէջ գտնուող և արսայի (գետին) վերածուած տան, պարտէզդին և կշգուրնոցին (պամալլդ) պետական կալուածտառուրքերը: Իսկ Աղվէրանի մէջ գտնուող ազարակին կալուածտառուրքը կը վճարեն նոյն կալուածը բանափող Լազգերը: 1909-10ին չեն վճարուած 1326 տարւոյ կալուածտառուրքերը՝ պահանջուած չըլլանուն պատճառաւաւ:

14. Գիւղատիեսական նիւղը կը պարունակէ վարձուած բանջարանոցին, պարտիզպանի մը և մշակներու վարձքերը, զնուած սերմերու և մշակական պարզ գործիքներու արժէքները, եւայլն: Այդ ճիւղը գոյութիւն ունեցաւ միայն 1907-8ին:

Գիւղատիեսական նիւղի հասոյթներուն ու ծախքերուն մէկ մասը անցած է 1908-9 տարւոյ հաշւոյն, որովհետեւ 1908ին մշակուած բանջարանոցին արդիւնքը 1908-9ին վաճառուած է եւ բանջարանոցին պահապանի վարձքը աշնան մէջ եւս վճարուած է՝ ինչ ինչ ծախքերու հետ միամին:

15. — Այլ եւ այլ. — Այս Պլիսոյ ներքեւ արձանագրուած են լիրայի մանրող-չէք, ընդեղէններու եւ բանջարելիններու մաքրողչէք, վճարուած փոխանակագին, նորեկ պաշտօնեաններու եւ մելինող կարօտ, ձրիսավարժ, զիշերօթիկ աշակերտներու ճանապարհուաժմքերը, եւայլն: 1908-9 տարւոյ զերչը բոլոր զիշերօթիկ աշակերտներու ու զարկուեցան իրենց հայրենիքները, պահեստի դրամչունեցող ձրիսավարժ աշակերտներուն առ հարկի ճանապարհուաժմքը վճարուեցաւ: Ահա այս պահանջուած այս մէջ այս զլիսոյ ծախքը բարձրացած է 4194 դրուշի:

16 Արտակարգ. — 1906-7ի այս զլիսոյ ծախքը 3155^{1/4} դրուշ աելի ունեցած է ինամակալութեան կարգադրութեամբ, հանդուցեալ Վերատեսուչ՝ Պրիդոր էֆ Զաքարեանի հիւանդութեան և թաղման սովթիւ:

1907-8ին, ունեցած է արտակարգ ծախք 2645^{1/2} դրոյ մէջ են ճարտարապետական Ա. Մուլյին վճարուած վարձքը՝ վարծարանին յաւելուածական շէնքերու, յաստկազիքի և նախահաշուույ պատրաստութեան հոմար:

Պարտիզին համար զնուած լամբարին արժէքը անցած է կահ-կարասիներու հաշուոյն:

1908-9ին իրեւ արտակարգ ծախք Պ. Պ. Ա. Խաչատրեանի և Ա. Սողիկեանի վճարուած է 7200 դրուշ, կարինէն կ. Պոլիս երթեւելի ծախքերուն փոխարէն:

Իսկ 1909-10ին իրեւ արտակարգ եղած ծախքերին են Յ պաշտօնէի վճարուած ճանապարհածախքերն

$I \cdot \% \text{ էն } 1700$

2 պաշտօնէի միասուցում

2 աշակերտի 1908-9ի արձակուրքէն մնացած ծախքի փոխարէն

Պատական ծախք որուն փոխարէնը զանձուած

Գումար Դ. Պ. » $\underline{\underline{3681}}$

* *

Կանխավիար — ինամակալութիւնը 1907-8ին յաջորդ տարիներու պաշարի գնմար վճարեց 450 օսմաննեան ոսկի, իրեւ փոխատութիւն, որ նոյնութիւններ փոխանցուեցաւ 1908-9 տարւոյ հաշուոյն:

Սակայն 1908-9ին Վարժարանին մասակարարութիւնն հաշուոյն պակաս վճարուած ըլլալով՝ պաշարի յատուկ կանխավճարէն մնաց 166,99^{3/4} միքա:

Ինամակալութիւնը 1909-10 տարւոյ մէջ վճարեց նաև 283,00^{1/4} + 5 = 288,00^{1/4} միքա, որով պաշարի յատուկ կանխավճարի գումարը բարձրացաւ 455 օմք. Որպիք:

Այս զերչին գումարին փոխարէն, վարժարանը 1910 Օդու. 31ին պատրաստ

ունէր զանազան պաշարելիքներ $I \cdot \% \text{ էն } 34289$ դրուշ արժէքով

Վճարած էր վարժարանին 1910-11 տարւոյ

աղքերու հրատակման ծախքը

Մասուկին մէջ պատրաստ դրամ ունէր՝

կանխավճարի հաշուոյն


Գումար $\underline{\underline{10711}}$ »

Գումար $\underline{\underline{45500}}$ »

Բացի պաշարի գնման յատուկ 10711 դրուշ ուկիզրամին, վարժարանին դրամարկին մէջ կար $I \cdot \% \text{ էն } 26271/4$ դրուշ որ է 1909-10 տարւոյ մասակարարութիւններ աւելցուած զումարը:

1906-10 տարիներու մէջ վարժարանին ծախքերու համագումարն եղած է Ա. Պ. 13565,0^{3/4} դրուշ:

թ.) Սահմանայի Արհեստանց



ՍԱՀՄԱՆԱՅԻ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ ԽԱՉՈՒՐՅԱՆ

Արհեստանոցի 1907-1910 եռամեայ հաշուեցոյցին մէջ մուտքին ու ելքին կողմերը նշանակուած ծանօթութիւնները նոր բայցարութիւննրու պէտք չեն թուղար այլ եւս :

Կահագործութեան վարպետին 1907-8ին անտոկու փոխ տրուած 50 լիրս գրամագլխի հաշոյն վարժարանը 1909-10ին գանձեց միայն 10 լիրա :

Արհեստանոցը քառամեայ պայմանաժամի լրումէն մէկ տարի առաջ փակելու համար, Հոգաբարձութիւնը իրեւ վեստոց հասուցում, կահագործութեան վարպետին վրայ մնացած պահանջքէն չոչեց 20 լիրա : Այս հաշուով անոր վրայ պահանջք կը մնայ 20 լիրա, ինչ որ պիտի գանձուի 1910-11 տարւոյ մէջ :

Համառակ Հոգաբարձութեան ջանքերուն, Արհեստանոցի հին պահանջքներէն վերջին 3 տարուան մէջ ոչինչ գանձուած է :

Արհեստանոցի եռամեայ իրական ելքի համագումարն է 22442 դրուշ՝ առանց հաշուելու փոխ տրուած 5000 դրուշ :

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

Սահմանապետ Վարժարանի 1906-1910 տարիներու ծախքերու համագումարն է
լ. • 0/0 էն 1356540.75 դշ.

Իսկ Սահմանապետ Արհեստանոցի ծախքերուն համագումարն է 1907-10 տարիներու մէջ 24442 »

(Տե՛ս բաղդատական հաշուեցոյց) Համագումար » 1380982.75 »

Բայց ի պաշարի յասուկ 45500 դրուշն, իրեւ Հոգելոյս-Հիմագրի նպաստ, ինսուրակալութենէն և կալուածական հասոյթներէ գանձուած է 1906-10 տարիներու մէջ վարժարանին հաշուոյն լ. • 0/0 էն 977024.25 դշ.

Արհեստանոցի հաշուոյն 1907-10 տարիներու մէջ 20174.75 »

Համագումար » 997199 »

Իսկ աշակերտներէ և զանազաններէ գանձուած է 1906-10 տարիներու մէջ 40372 $\frac{1}{2}$ դշ.

Վարժարանի հաշուոյն զանազաններէ գանձուած 5267 $\frac{1}{4}$ »

Համագումար լ. • 0/0 էն 408988 $\frac{3}{4}$ »

որմէ զեղչելով 1906-7 տարւոյ մասակարարութենէն աւելցած և յաջորդ տարւոյ հաշուոյն փոխանցուած գումարը (17402 $\frac{3}{4}$ +4175=) լ. • 0/0 էն 21577 $\frac{3}{4}$ դրուշ և փոխադրուած գումարէն ետ առնուած +1000 դշ. 22577 $\frac{3}{4}$ +386411(*) դշ.

Քառամեայ մուտքի համագումարն է լ. • 0/0 էն 1383610 »

» ելքի » » փոխադրուած դրամէն պահանջք մնացած 2000 դրուշով միասին 1380982.75 »

